

**ԳՐԱԲԱՐԻ ԵՐԿԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒ ԵՌԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ**

ՈՒՋԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ

Երկբարբառների ու եռբարբառների հետ կապված գրեթե բոլոր երևույթներն ու օրինաչափությունները հանգամանալից ուսումնասիրված են գրաբարի քերականության պատմության մեջ: Մենք փորձել ենք քննել և ներկայացնել դրանց դրսևորումները 18-րդ դարի առաջին քառորդի հայ ազատագրական շարժման նշանավոր առաջնորդ, Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցի պատմական երկուն և Նամակներում: Բայց նախ համառոտ անդրադարձ հարցի պատմությանը:

Պատմական քննությունը ցույց է տվել, որ քերականները՝ սկսած Մ. Չամչյանից (18-րդ դար), Վ. Չալըխյանից, Ա. Բագրատունուց, Ա. Այտընյանից (19-րդ դար) մինչև արդի լեզվաբանները, ուսումնասիրել են հին հայերենի հնչյունական իրողությունները՝ դրսևորելով որոշակի տարակարծություններ և ընդգծելով այս կամ այն առանձնահատկությունները: Ե՛վ նախորդ դարաշրջանների, և՛ մերօրյա լեզվաբանների դիտարկումները երկբարբառների ու եռբարբառների քանակի և դրանց սահմանման վերաբերյալ տարբեր են: Հայտնի է, որ դրանք հատուկ են եղել հին հայերենի հնչյունական համակարգին և ձայնավորների հետ միասին համարվել են վանկարար հնչույթներ: Մի դեպքում դրանք եղել են ձայնավորի և ձայնորդի կապակցություններ, որոնք կոչվել են երկբարբառ, մյուս դեպքում՝ երկու ձայնորդի և ձայնավորի միասնություն, որոնք էլ կոչվել են եռբարբառ:

Ա. Բագրատունին ընդունում է հինգ երկբարբառ. «Երկբարբառ ասի, յորժամ երկու ձայնաւոր ի մի ձայն և մի վանկ կատարին. որպէս **աւ, իւ, եւ, եա, ու...**»¹:

Ա. Այտընյանը, ընդունելով Բագրատունու նշած հինգ երկբարբառը, այս սահմանման մեջ «**կատարին**» բառը փոխարինում է «**կազմեն**»-ով. «...Երկու ձայնաւոր մէկտեղ՝ մէկ վանկ կը կազմեն, ինչպէս՝ **եա**: Այսպիսի վանկերն երկբարբառ կը կոչուին. և են՝ **աւ, եւ, իւ, ու, եա**»² (ընդգծումը մերն է – Ռ. Ս.): Ուշագրավ է, որ երկու քերականների աշխատություններում խոսք չկա եռբարբառների վերաբերյալ:

Հետագայում Մ. Աբեղյանի և Հր. Աճառյանի լեզվաբանական ուսումնասիրություններում արդեն երկբարբառների կողքին խոսվում է նաև դասական հայերենի եռբարբառների մասին: Մ. Աբեղյանը հիշյալ երկբարբառների թիվը հասցնում է յոթի՝ հանելով **ու**-ն և ավելացնելով **այ, ոյ** և **ւո**:

¹ Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 3:

² Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 2:

Սրանց կողքին նշում է նաև **եալ, եայ, տյ** եռաբարբառները: Նա երկբարբառը սահմանում է որպես երկու ձայնավորի այնպիսի կապակցություն մի վանկում, որի մեջ ձայնավորներից մեկը վանկային է, իսկ մյուսն անվանկային, որն էլ, միանալով վանկային ձայնավորին, կազմում է երկբարբառ³:

Հին հայերենի երկբարբառները դասակարգելով երեք խմբում՝ Հր. Աճառյանն ընդունում է շուրջ երեք տասնյակ երկբարբառ: Լեզվաբանը, դիմելով այլ լեզուների համեմատությանն ու հիմք ընդունելով ձայնախոսության և լեզվաբանական օրենքները, գտնում է, որ «երկբարբառները միություն են երկու տարբեր ձայնավորների, որոնցից մեկը հնչվում է ամբողջ, իսկ մյուսը խուսափուկ հնչումով, որով և կոչվում է կիսաձայն: Ըստ այդմ՝ հայերենի երկբարբառները բաժանվում են երեք խմբի.

1. **այ, ոյ,**

2. **ալ, ել, իլ,**

3. **եա, եի, էա, էի, էո, էու, իա, իե, իէ, իո, իու, ուա, ուէ, ուե, ուի, ուո, ուու**»⁴:

Հր. Աճառյանը սահմանում է նաև եռաբարբառները. «...բացի վերոհիշյալ երկբարբառներից՝ հայերենը գիտե նաև բազմաթիվ եռաբարբառներ, այն է՝ երկու ձայնավորից և մեկ կիսաձայնից բաղկացած ձայնախմբեր. այսպես են՝ **եայ, էայ, տյ, ուոյ, իալ, էիլ, ուալ**»⁵:

Նկատելի է, որ երկբարբառների հարցում լեզվաբանի մոտեցումը հիմնված է գրության ձևերի վրա, հետևաբար ներկայացնում է գրեթե բոլոր դեպքերը:

Հր. Աճառյանի այս տեսակետները արդի լեզվաբանական դիտարկումներում շփոթության և հակասությունների տեղիք են տվել: Հատկապես վիճելի են **ու** ձայնավորով կազմությունները: Սակայն նկատենք, որ Աճառյանը ևս անդրադառնում է **ու**-ով ձևերին՝ գրելով. «Առանձնապես նկատողության արժանի են **ու** ձայնավորով կազմված երկբարբառները. սրանք վանկատության մեջ հաշվում են առանձին-առանձին, այսպես՝ **ուա** երկու վանկ է. համեմատենք՝ **լուայ, լուար, լուալ** կամ **տուայ, տուար, տուալ** և այլն, բոլորն էլ՝ առանց հավելվածի: Երկվանկ ըլլալու էին նաև **ուի, ուե, ուո, ուու**, որոնց համար դժբախտաբար նման օրինակներ չունինք»⁶: Ուշագրավ է, որ այս կապակցությունները երկվանկ համարելով հանդերձ՝ լեզվաբանը դրանք դասում է երկբարբառների շարքում: Մեր դիտարկմամբ՝ քանի որ այդ կապակցությունները չէին միավորվում մեկ վանկում (իսկ վերը բերված սահմանումներից պարզ է, որ երկբարբառ կոչում ենք այն միավորը, երբ մեկ վանկի մեջ միանում են երկու ձայնավոր, որոնցից մեկը կորցրել է իր վանկարար դերը), հետևաբար երկբարբառ չեն կարող համարվել: Հետագայում Աճառյանի այս տեսակետը (ու-ով կապակցությունները երկբարբառ ընդունելը) զարգացնում է Է. Աղայանը, որը մեծ ներդրում ունի դասական հայերենի երկբարբառների և եռաբարբառների քննության գործում:

³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 88:

⁴ Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1981, էջ 581:

⁵ Նույն տեղում, էջ 593:

⁶ Նույն տեղում:

Է. Աղայանը, իր ուսումնասիրություններում կիրառելով նորագույն մեթոդներ, մասնավորապես հենվելով հնչույթաբանական վերլուծության վրա, առանձնացնում է վանկաբնային հնչյունները: Հր. Աճառյանի բերած շարքերից լեզվաբանը հանում է օտարամուտ գրադարձություններն ու ձայնավորների կապակցությունները՝ թողնելով տասը երկբարբառ՝ **եա, ուա, ուե, ուի, ուո, ալ, ալ, ել, ոյ, իլ**, և հինգ եռբարբառ՝ **եալ, եայ, ուայ, ուալ, ուոյ**, որոնք անվանում է «բաղադրյալ վանկաբներ»⁷: Բացի այս, նա առաջարկում է նաև նոր եզրույթներ՝ երկբարբառակերպ **է** և եռբարբառակերպ **ուէ**: Մեր կարծիքով՝ **է** - ի և **ուէ** - ի այսպիսի անվանումները պատահական չեն. Աղայանը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ եթե հետդասական շրջանում **է**-ն դարձել է պարզ հնչյուն, ապա դասական շրջանում այն ունեցել է երկբարբառակերպ արտասանություն, նույնը կարելի է ասել **ուէ**-ի մասին: Է. Աղայանը երկբարբառները խմբավորում է **բարձրացող կամ ուժգնացող (ուե, ուա, եա** և այլն) և **իջնող կամ թուլացող (ալ, ալ, ոյ** և այլն) տեսակներով: Նա իր այս բնորոշումները հիմնավորում է վանկաբնում ձայնորդ և ձայնավոր հնչյունների դիրքով:

Երկբարբառներին վերաբերող հաջորդ կարևորագույն հարցն այն է, թե դրանք ո՞ր դեպքում են համարվել երկբարբառ և ո՞ր դեպքում՝ ձայնավորի և բաղաձայնի կապակցություն:

Քերականագիտության մեջ իշխող է այն տեսակետը, որ տվյալ հնչույթները երկբարբառի արժեք են ունեցել միայն մեկ դիրքում՝ բաղաձայնից առաջ, իսկ մնացյալ դիրքերում՝ ձայնավորից առաջ կամ բառավերջում, համարվել են պարզապես ձայնավորի և բաղաձայնի կապակցություններ:

Երկբարբառների և եռբարբառների գնահատման հարցում մենք հիմնականում հենվում ենք Է. Աղայանի տեսության վրա, սակայն ընդունում ենք ամենատարածված կարծիքը, ըստ որի՝ երկբարբառներն են՝ **եա, իլ (ել), աի, ոյ, ալ, տ**, իսկ եռբարբառները՝ **եայ, եալ, տյ, իայ**, որոնք նշվում են նաև գրաբարի դասագրքերում⁸:

Վերոնշյալ երկբարբառների ու եռբարբառների դրսևորումներն էլ առանձին-առանձին փորձել ենք քննել Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» երկում և Նամակներում:

Ուշագրավ է, որ 18-րդ դարի սկզբներին Ջալալյանցը հիմնականում (մասնակի շեղումներով) հարազատ է մնացել գրաբարի լեզվական իրողություններին: Պատմության և Նամակների հնչյունական համակարգում, մասնավորապես երկբարբառների ու եռբարբառների կիրառություններում, հիմնականում պահպանված են գրաբարյան ձևերը: Թեև անհրաժեշտ է նկատել, որ խոսքն այս դեպքում վերաբերում է հեղինակի ապրած ժամանակաշրջանի գրաբարին, որը, շարունակելով մնալ ոսկեդենիկ և կանոնավոր, մասամբ կրել է նաև բանավոր խոսակցական լեզվի ազդեցությունը:

⁷ Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Եր., 1964, էջ 104, 112:

⁸ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1974, Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004, Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008:

Երկբարբառների հնչյունական իրողությունները մենք փորձել ենք ցույց տալ ինչպես բառերի ուղիղ ձևերում, այնպես էլ բառաթեքման և բառակազմության մեջ:

Հայտնի է, որ հին հայերենի երկբարբառներն ու եռբարբառները հետդասական շրջանում և միջին դարերում շեշտափոխական հնչյունափոխության հետևանքով վերածվել են պարզ ձայնավորների կամ բաղաձայնի և ձայնավորի կապակցության (**ալ>օ, եա>յա, եայ>է**): Ուսումնասիրվող բնագրում հանդիպում են *լեառն>լերանց* (Պ.59), *քրիստոնեայք >քրիստոնէից* (Ն.156), *տեառնէ>տէրամբ* (Ն.156)⁹ հնչյունափոխված ձևերը, որոնք մի դեպքում շեշտափոխության, իսկ մյուսում՝ անկանոն հոլովման արդյունք են:

Եա երկբարբառը հանդես է գալիս միայն շեշտի տակ՝ վերջնական կում, և շեշտակորույս լինելով՝ փոխվում է **ե** պարզ ձայնավորի: Այս հնչյունափոխությունը ընդհանուր է գրաբարի և միջին հայերենի համար: **եա** երկբարբառը գործածվում է գոյականի ուղիղ և թեք ձևերում, դերանունների կազմության մեջ, անցյալ դերբայի **-եալ** և բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի **-եաց** վերջավորություններում: Ի դեպ, այս վերջին ձևը քերականական համանունություն է դրսևորում՝ որպես անցյալ կատարյալի հիմք և որպես անցյալ կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի վերջավորություն, ինչպես՝ *գովեաց* (Պ.38), *տիրեաց* (Պ.40), *մթերեաց* (Պ.53), *գրեաց* (Պ.67), *ժողովեաց* (Պ.68) և այլն:

Հայտնի է, որ **-եալ** անցյալ դերբայի պատմական փոփոխությունից էլ առաջացել է աշխարհաբարի վաղատար դերբայը (**-ել** վերջավորությամբ):

Նկատի ունենալով, որ Ջալալյանցի Պատմության մեջ և Նամակներում **եա** երկբարբառն ամենակենսունակն է (այդ երկբարբառով պատմիչն ընդհանուր առմամբ հինգ հարյուր բառ է գործածել)՝ մենք այդ երկբարբառով հանդիպող կազմությունները դասակարգել ենք հետևյալ կերպ. **ա) անվանական կազմություններ, բ) դերանվանական կազմություններ, գ) բայական կազմություններ**, այդ թվում՝ **բայի հարացուցային (խոնարհված) ձևեր և դերբայներ**: Ստորև ներկայացնում ենք համապատասխան կիրառությունները՝ ըստ նշված դասակարգման:

ա) Անվանական կազմություններ

1. Գոյականի ուղիղ ձևերում

Ապա ո՞րչափ և քանի՞ցս և քանի՞ պատիկ պարտիմք մեք ողբալ և հառաչել զողորմելի կեանս մեր... (Պ.36): *...և անտի Սահաթիւ Կաղզուանաւ և Կողբաւ անցեալ ի գետն Ախուրեան որ կոչի Արփայչայի»* (Պ.39): Նույն ձևով՝ *հրեայ* (Պ.34), *ահեակ* (Պ.43), *տեարք* (Պ.48), *(գ)կեանս* (Պ.48), *լեառն* (Պ.39), *սենեակ* (Պ.64), *Առաքեալ* (Ն.162), *Եսաիեա* (Ն.144) և այլն:

2. Գոյականի թեք ձևերում

Դրանք հիմնականում դրված են եզակի ու հոգնակի սեռական, տրական հոլովներով, իսկ ավելի հաճախ՝ գործիականով: Այս ձևերում **եա** երկ-

⁹ **Տ. Եսայի Հասան-Ջալալեանց**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղեմ, 1868: Մենք օգտվել ենք այս բնագրի վերահրատարակությունից՝ Ստեփանակերտ, 2007: Այս և մյուս բոլոր մեջբերումները նշված գրքից են՝ Պ.- Պատմություն, Ն.- Նամակներ:

բարբառի ձևավորումը պայմանավորված է **իւ** երկբարբառի փոփոխությամբ. **իւ**-ը, **ա** հոլովիչին հանդիպելով, վերածվում է **ե**-ի՝ *բնութիւն-բնութեանս* (Պ.34), *նեղութիւն-նեղութեանց* (Պ.35), *իշխանութիւն-իշխանութեան* (Պ.40) և այլն: Այսպես՝ *եւ սա այսպիսի քաջութեամբ և արիութեամբ կեցեալ վախճան առնու ռիթ թուին* (Պ.44): *Իսկ յաղագս անօրէնութեան, օրինազանգութեան, սոպորութեան և անմտութեան և անմիաբանութեան սոցա...* (Պ.48): *Ազդ լիցի ինքնակայութեանդ զի բազում ամաւ յառաջ լսելով մեր գրաջութեան և բարութեան և քրիստոսասիրութեան քո զհամբաւ...* (Ն.156): Օրինակները շատ են՝ *շինութեանց* (Պ.35), *բարեկարգութեանց* (Պ.35), *թնամեաց* (Պ.35), *զրկողութեամբ* (Պ.36), *կաշառառութեամբ* (Պ.36), *պղծագործութեամբ* (Պ.36), *նախագիտութեամբ* (Պ.37), *բռնակալութեամբ* (Պ.39), *սուղանութեան* (Պ.40), *աստուածապաշտութեան* (Ն.156), *երկրպագութեամբ* (Ն.156), *յափշտակութեան* (Պ.48), *ողջութեամբ* (Ն.156), *սրբութեան* (Ն.156), *քրիստոնեութեան* (Ն.156), ինչպես նաև **ի-ա** խառն հոլովման դեպքում՝ *ալեաց* (Պ.34), *երախտեաց* (Պ.34), *չորքոտանեաց* (Պ.47), *Լազկեաց* (Պ.68), *Տփխեաց* (Պ.60) և այլն: Պատմության մեջ վկայված *յորելեանի* (Պ.35) ձևում չի կատարվել սպասվող եա-ե/ի հնչյունափոխությունը, որ հատուկ էր դասական գրաբարին՝ *յորելիցի*:

բ) Դերանվանական կազմություններ

Եա երկբարբառը հանդես է գալիս բառի ուղիղ ձևերում և պահպանում է իր երկբարբառային գրությունը թեք ձևերում: Այսպես՝ *...և ամբաստանութիւնս տրտնջանօք հանդերձ գրեալ են ի պատմութիւնս իւրեանց...* (Պ.36): *Այս եաղուր թագաւոր որ նստէր ի Դարեժ շահաստանի, փեսայացոյց ինքեան ի քոյր իւր զէխ Յայտարն...* (Պ.41): *...և զամենեսեան ի համարաթիւն գրելով՝ տարեալ ցուցին ատենի արքային* (Պ.46): *Սոքա միահաղոյն և զվերոյ գրեալսն ամենեքեան հեստեալք թիկունս դարձուցին, և ընդդէմ դարձան հրամանաց թագաւորին Պարսից* (Պ.50) և այլն:

գ) Բայական կազմություններ

1. Բայի խոնարհված ձևերում

Եա երկբարբառը դրսևորվում է նաև բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի *-եաց* վերջավորության մեջ: Ե խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ ցոյական է, որը առաջին և երկրորդ դեմքերում վերածվում է **ե**-ի, իսկ եզակի երրորդ դեմքում պահպանվում է հիմքը. այսպիսով՝ առաջանում է քերականական համանունություն անցյալ կատարյալի հիմքի և անցյալ կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի վերջավորության միջև: Այսպես՝ *...և Տէրն իսկ գովեաց զլումայս այրւոյն* (Պ.38), *...և ազգաց տիրեաց մինչեւ յերելունն Մահմետի* (Պ.40), *...բայց ոչ կասեցաւ եւ ոչ դադարեաց ի չարութենէ* (Պ.68), նաև՝ *մանրեաց* (Պ.41), *յատեաց* (Պ.44), *գուշակեաց* (Պ.45), *զլխատեաց* (Պ.54), *ասպատակեաց* (Պ.55), *գերեաց* (Պ.59), *յղեաց* (Պ.65), *ժողովեաց* (Պ.68), *ուխտեաց* (Պ.68), *արծակեաց* (Պ.70) և այլն: Նամակներում այսպիսի ձևերը սակավ են հանդիպում՝ *տարածեաց* (Ն.150), *ժամանեաց* (Ն.148), *պատեաց* (Ն.193):

2. Դերբայական կազմություններում

Գիտեք, որ գրաբարի անցյալ դերբայը ձևավորվել է **-եալ** դերբայական մասնիկով, որը դրվել է հիմնականում անցյալ կատարյալի, մասամբ նաև՝ ներկայի հիմքի վրա: Անցյալ դերբայով կազմությունները Ջալալյանցի պատմական երկուն և Նամակներուն մեծ թիվ են կազմում: Այդ դերբայական ձևերը գործածված են գրական և բարբառային տարբերակներում: Բարբառային ձևերը հաճախ են հանդիպում Նամակներուն: Օրինակներ՝ *Յիսուսի Քրիստոսի ծառայիցն նուաստ ծառայ տէր Եսայի կաթողիկոս ամենայն տանս Աղուանից և մասին Հայոց, վիջակեալ յաթոռ սրբոցն Եղիշէի առաքելոյն և Գրիգորիսի հայրապետին...* (Ն.156), *...և որպիսութիւն մեր ազտեալ և պողոքեալ ենք ի դուռն հզօրիդ...* (Ն.165), *...այլ և վանորայք և անսպատք մեր խաւար և խանկարեալ կան* (Ն.166): Պատմության մեջ անցյալ դերբայական ձևերը հանդիպում են բացառապես գրական տարբերակներով՝ *բերեալ* (Պ.34), *գեղեալ* (Պ.34), *աւարտեալ* (Պ.35), *հասեալ* (Պ.35), *շարահարեալ* (Պ.35), *դարձեալ* (Պ.35), *սիրեցեալք* (Պ.36), *գրկեալք* (Պ.37), *գառածեալ* (Պ.37), *կոհակացեալ* (Պ.37), *յառաջացեալք* (Պ.39), *անցեալ* (Պ.39), *կոչեցեալ* (Պ.39), *յաղթահարեալ* (Պ.41), *ածապարեալ* (Պ.43), *սպառնացեալ* (Պ.45), *դօղեալ* (Պ.45), *թագուցեալ* (Պ.45), *ասացեալք* (Պ.46), *փոփոխեալ* (Պ.47), *կալեալ* (Պ.40), *ծովացեալ* (Ն.144), *շիջեալ* (Ն.145), *յղեալ* (Ն.145), *առաքեալ* (Ն.150), *գօրացեալ* (Ն.156), *նուաստացեալ* (Ն.173), *մոլորեալ* (Ն.173), *կացեալ* (Ն.191) և այլն:

Ա երկբարբառով ընդամենը չորս բառ ենք գտել Ջալալյանցի երկուն՝ *Դաւրեժ/Դաւրիժու* (Պ.43, 50), *Կաւկասու* (Պ.49), *ի դաւթ* (Պ.54) և *սակաւս* (Պ.43): Վերջինս, մեր կարծիքով, **վերապահելի ձև** է, քանի որ **ս-**ից առաջ գաղտնավանկ **ը** է հնչում, որն էլ արտասանությունը դարձնում է ձայնավորահանգ՝ չեզոքացնելով երկբարբառի պատկերը: Նամակներուն այս երկբարբառով որևէ բառ չի հանդիպում: Ենթադրում ենք, որ սա հետևանք է արդեն կատարված *աւ>օ* պատմական հնչյունափոխության:

Իւ/ եւ: Հայտնի է, որ **եւ** վանկաբնով բառերը զուգահեռաբար ունեցել են **իւ**-ով ձևեր, որոնք բնորոշ էին հին հայերենին, այսինքն՝ դրանք նույն երկբարբառի փոփոխակներն են եղել և առանց իմաստային տարբերական փոխարինել են միմյանց (գուցե նախապես եղել են բարբառային տարբերություններ), ինչպես՝ *մեւս / միւս*, *գեւղ / գիւղ* և այլն, սակայն առաջինը հատուկ է եղել դասական գրաբարին և աստիճանաբար՝ որպես ոչ կենսունակ վանկաբուն, դուրս է մղվել՝ տեղը զիջելով **իւ**-ին: Ջալալյանցի մոտ դրանք հիմնականում **իւ** գրչությամբ են, սակայն հանդիպում են նաև **եւ**-ով ձևեր. այսպես՝ *ի գիւղի* (Պ.45), *գիւղօրէից* (Պ.46), *գիւղից* (Պ.48) ձևերի դիմաց ունենք *գեւղ* (Ն.185), *գեօղ* (Պ.62), *գեղ* (Ն.185) և հոլովված *գեղջ* (Պ.52) ձևերը, սրանցից *գեղ*-ը, կարելի է կարծել, բարբառային ներթափանցում է՝ *գի* (մեծ) *գեղն* *հարիւր յիսուն*, *հարիւր*, *կամ յիսուն թուման*, *և յոյժ փոքրն յերեսուն և կամ ի քսան թումանէ չէր պակաս* (Պ.46):

Առավել ուշագրավ է **եւ** երկբարբառի առկայությունը *պարթեւք և պարգեւս* բառերում: Առաջին բառում՝ *պարթեւք*, որը դրված է ուղղական հոլով, պարզ է, որ գործ ունենք երկբարբառային ձևի հետ, մինչդեռ հայցական հոլովով դրված *պարգեւս* բառում **եւ**-ը, մեր կարծիքով, երկբարբառ չէ, այլ պարզապես ձայնավորի և բաղաձայնի կապակցություն՝ վերը

բերված հիմնավորմամբ: Ուշադրության արժանի են նաև Պատմության մեջ հանդիպող **իւ** գրչությամբ մի քանի կազմություններ՝ *Չայրապետիւն* (Պ.44), *կաթողիկոսիւն* (Պ.44), *վաղիւն* (Պ.66), որտեղ, ինչպես արդեն ասել ենք, **իւ**-ի և **ւ**-ի միջև զաղտնավանկ **ը** է հնչում, որն էլ արտասանությունը դարձնում է ձայնավորահանգ՝ չեզոքացնելով երկբարբառի պատկերը: Հետևաբար, դրանք նույնպես դասել ենք **վերապահելի ձևերի** շարքին:

Մնացյալ բոլոր դեպքերում՝ և՛ երկում, և՛ Նամակներում, բառերի ուղիղ և թեք ձևերում ամենուրեք առկա է **իւ** երկբարբառային գրությունը, ինչպես՝ *նիւթ* (Պ.34), *դիտաւորութիւն* (Պ.34), *յոլովութիւն* (Պ.36), *իւրաքանչիւր* (Պ.35), *նոսիւք* (Պ.37), *իւրում* (Պ.43), *հնարիւք* (Պ.42), *հարիւր* (Պ.46), *միւս* (Պ.49), *շիւղ* (Պ.56), *զանծիւք* (Պ.57), *երկիւղած* (Պ.62), *սպասիւք* (Պ.70), *ստերիւրեալ* (Պ.56), *խնճոյիւք* (Պ.57), *զանծիւք* (Պ.57), *զէյութիւն* [sic] (Ն.145), *վկայութիւն* (Ն.148), *անհովիւք* (Ն.165), *որպիսութիւն* (Ն.171), *տիւրիւն* (Ն.163) (բարբառային ձև է՝ փխ. *դիւրիւն*) և այլն:

Ոյ: Ջալալյանցի պատմության մեջ այս երկբարբառը հանդես է գալիս՝

1. բառի ուղիղ և թեք ձևերում՝ *քոյր* (Պ.41), *խոյս* (Պ.42), *յոյժ* (Պ.45), *սոյնպէս* (Պ.48), *զետոյն* (Պ. 58), *սաստկասառոյց* (Պ.58) և այլն,

2. բայակազմության մեջ՝ *փախոյց* (Պ. 41), *չքացոյց* (Պ. 41), *հնազանդեցոյց* (Պ. 43), *կուրացոյց* (Պ. 53) և այլն:

Գրաբարում փակ վանկում շեշտի ազդեցությամբ *ոյ*-ը փոխվում է *ու*-ի: Նամակներում մեկ-երկու դեպքում հանդիպում են *ոյ>ու* հնչյունափոխության օրինակներ՝ *քրիստոսաւանդ ողջունիւ* և *աստուածային սիրով* (Ն.165), *ոչ տեսանենք ըստ փութոյ ժամանակիս* (Ն.165):

Իո: Ուսումնասիրվող բնագրերում հոլովակալ վերջավորություններում հանդիպում են նաև **ւո** կապակցությամբ կիրառություններ: Սա բացատրվում է **ի** ձայնավորի հնչյունափոխությամբ, որը, բաց վանկում հանդիպելով **ո** ձայնավորին, փոխվում է **ւ**-ի: Այս երևույթը դրսևորվում է **ո** պարզ հոլովման ենթարկվող **-ցի** վերջածանցով բառերում: Մեր կարծիքով, **ւո**-ն կարելի է երկբարբառ համարել՝ հիմք ընդունելով Ա. Աբրահամյանի կարծիքը: Ջալալյանցի մոտ էլ հաճախակի են այս երկբարբառով կիրառությունները՝ ...և *Միխայէլ պատրիարք Ասորւոց* (Պ.34):... և *զբոլոր տունն Վրաց ի ձեռաց Օսմանցւոց* (Պ.44): ...և *զկնի որդւոց և թռանց* (Պ.49): ...որ ի կողմն Սուրբօրւլան գեղջն, թոյլ տալով *քաղաքագւոցն* (Պ.52) և այլն:

Այժմ անդրադառնանք նաև Պատմության մեջ և Նամակներում առկա եռաբարբառների կիրառություններին: **եաւ, եայ, տոյ, իայ** եռաբարբառները հանդիպում են սակավ գործածությամբ: Այսպես՝ *հոգւոյն* (34), *այրւոյն* (38), *տեղւոյն* (54), *հրեայք* (34), *արևելեայց* (39), *քրիստոնեայք* (49), *միայն* (36) և այլն: Այս եռաբարբառներից հնչյունափոխության է ենթարկված միայն **եայ**-ը, որը վերածվել է **է**-ի՝ *քրիստոնեայք>քրիստոնէից* (Պ.34, Ն.165) բառում: Ինչպես՝ ...*լեալ են հաւատով քրիստոնեայք...* (Պ.49): ...և *ոմանք յայլազգ քրիստոնէից...* (Պ.34):

Մյուս եռաբարբառները հանդիպում են միայն անհնչյունափոխ ձևով. ...*երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ...* (Պ.39): ...*ասէին զթիւ ոսկւոյն և*

արծաթոյն... (Պ.54): ...բազմաշխատ վաճառականք են արք տեղւոյն... (Պ.69) և այլն:

Այսպիսով, առանձնացնելով և քննելով երկրարբանների և եռարբանների հնչյունական դրսևորումները Եսայի Հասան-Չալալյանցի Պատմության մեջ և Նամակներում՝ գտնում ենք, որ դրանք կարևոր են տվյալ ժամանակաշրջանում լեզվի հնչյունական մակարդակի փոփոխությունների ընթացքը բնութագրելու համար:

РУЗАННА СААКЯН – Проявления дифтонгов и трифтонгов древнеармянского языка в "Истории" и Письмах Есаи Гасан-Джалальянца. – В статье рассмотрены звуковые характеристики слогообразующих дифтонгов и трифтонгов грабара (древнеармянского литературного языка) в "Истории" и письмах Есаи Гасан-Джалальянца, известного деятеля XVIII века. Зафиксированы закономерные изменения и отклонения, произошедшие в языке. Примечательно, что в начале XVIII века Джалальянц в основном придерживался языковых норм грабара. Следует, однако, отметить, что в ряде случаев он отклонялся от них, и это наглядно характеризует изменения на звуковом уровне языка данного периода.

RUZANNA SAHAKYAN – Manifestations of Diphthongs and Triphthongs of Old Armenian in the "History" and Letters of Yesai Hasan-Jalalyants. – The article examines the phonetic manifestations of syllable-forming diphthongs and triphthongs of Old Armenian in the "History" and Letters of Yesai Hasan-Jalalyants, a famous political figure of XVIII century. The article presents the regular changes and shifts in them in comparison with Ancient Armenian. It is noteworthy that Jalalyants adhered basically to language norms of Grabar at the beginning of XVIII century. It should however be mentioned that in some cases he deviated from these norms and this clearly characterizes the changes on the sound level of the given period.